

**«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի 29.09.2021թ. թիվ 973/Ն/Մ հրամանի



ԿԱՐԳ

**ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԼՈՐԱՐԱՐԱԿԱՆ
ՄԵԹՈՂՆԵՐՈՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՏԵՍԱԶԱՅՆԱԳՐՎԱԾ ԴԱՍԻ «ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ»
ԱՄԵՆԱՍՅԱ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՄԱՆ**

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 2 23.09.2021թ.

Վանաձոր
2021թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) նորարարական մեթոդներով դասավանդման և տեսաձայնագրված դասի «Գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը, որի նպատակն է նպաստել դասավանդման ընթացքում նորարարական մեթոդների կիրառմանը և կատարելագործմանը, լավագույն փորձի տարածմանը:
2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են ՀՀ օրենսդրությունը, սույն կարգը և ներքին իրավական ակտերը: Սույն կարգի իմաստով «խրախուսում» եզրույթը մեկնաբանվում է ՀՀ Աշխատանքային Օրենսգրքի 219-րդ հոդվածով սահմանված խրախուսման համատեքստում:
3. Սույն կարգը ստեղծվել է «PRINTEL (ERASMUS+)» («Փոփոխություն լսարանում. նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով») նախագծի շրջանակներում:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Մրցույթը կազմակերպվում և անցկացվում է տարեկան մեկ անգամ՝ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:
5. Մրցույթին կարող են մասնակցել Համալսարանում աշխատող դասախոսները: Մրցութային հանձնաժողովի անդամները չեն կարող մասնակցել մրցույթին:
6. Մրցույթի անցկացման մեկնարկը տրվում է ռեկտորի որոշմամբ՝ սույն կարգի դրույթներին համապատասխան կազմված հայտարարությամբ: Հայտարարությունը տարածվում է Համալսարանի և ներքին, և՛ արտաքին տեղեկատվական միջոցներով (ներքին ցանց, բուհի կայք, սոցիալական ցանցեր):
7. Մրցույթի անցկացման նպատակով ռեկտորի հրամանով ստեղծվում է մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որն առաջնորդվում է սույն կարգի IV մասի դրույթներով:
8. Մրցույթն անցկացվում է երկու փուլով.
 - 8.1. Առաջին փուլ-մրցանակակիրների ընտրություն ըստ ներկայացրած հայտի պահանջների համապատասխանության:
 - 8.2. Երկրորդ փուլ-մասնագիտական դասընթացի մեկ դասի տեսաձայնագրության գնահատում՝ ըստ սույն կարգով սահմանված չափանիշների (Հավելված 1):
9. Ռեկտորը, հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված արդյունքները (գրավոր), 7-օրյա ժամկետում հրամանագրում է մրցույթի հաղթողներին խրախուսմամբ:
10. Մրցույթի արդյունքները ամփոփվում են երեք մրցանակային տեղերով՝ առաջին, երկրորդ, երրորդ:

III. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

11. Մրցույթին մասնակցելու վերաբերյալ հայտարարության հրապարակումից հետո՝ 10 օրվա ընթացքում թեկնածուն ներկայացնում է համապատասխան փաստաթղթերը և կցուցնում հայտարարության մեջ նշված հետադարձ կապով (ընդհանուր բաժին):
12. Մրցույթին մասնակցող թեկնածուն պետք է ներկայացնի.
 - 12.1. Դիմում
 - 12.2. Ինքնակենսագրություն (CV)
 - 12.3. Գնահատման ներկայացված դասընթացի ուսումնամեթոդական փայտերը



- 12.4. Դասընթացի ժամանակ կիրառվող նորարական մեթոդներ/ի ցանկը և հակիրճ նկարագրությունը դասավանդման համալսարանական փուլում արդյունավետության բարձրացման վերաբերյալ /յուրաքանչյուր մեթոդի համար 1 էջի սահմաններում/:
- 12.5. Տվյալ դասընթացի ուսումնամեթոդական փաթեթում նշված մեթոդներ/ի կիրառությամբ 1 դասի տեսաձայնագրություն կրիչով կամ հայտարարության մեջ նշված էլեկտրոնային հասցեով:
- 12.6. Ուսանող/ներ/ի աշխատանք/ներ, որոնք կատարվել են ներկայացված մեթոդի կիրառության արդյունքում (առկայության դեպքում):
- 13. Մրցույթին մասնակցել ցանկացող դասախոսը Համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի օգնությամբ կարող է իր դասը տեսաձայնագրել՝ կիրառելով Համալսարանի ռեսուրսները: Աշխատանքները կազմակերպվում են ռեկտորին գրավոր դիմելու դեպքում:
- 14. Թեկնածուների փաստաթղթային փաթեթը եռօրյա ժամկետում տրամադրվում է Հանձնաժողովի նախագահին:
- 15. Հանձնաժողովի առաջարկով հայտը ներկայացնող դասախոսը կարող է թերի կամ ոչ լիարժեք ներկայացված փաստաթղթային փաթեթի թերությունները երկու աշխատանքային օրում վերացնել՝ ներկայացնելով թերություններից զերծ փաստաթղթ/երը բուն ընդհանուր բաժնի միջոցով: Եթե մրցույթի մասնակիցը նշված ժամկետում ներկայացնում է ճշգրտված փաստաթղթերը, ապա դիմումը համարվում է ընդունված սկզբնական ներկայացման օրը: Եթե մրցույթի մասնակիցը նշված ժամկետում չի շտկում թերությունները, ապա դիմում հայտը համարվում է մերժված:
- 16. Մրցույթի արդյունքերը հրապարակվում են Համալսարանի և ներքին և արտաքին տեղեկատվական միջոցներով:

IV. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ և ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

- 17. Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում է մրցութային հանձնաժողով, որում ընդգրկվում են ռեկտորը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, կրթական գործընթացների կառավարման բաժնի ղեկավարը, կրթական բարեփոխումների և վերապատրաստման կենտրոնի ղեկավարը, մասնագիտական ամբիոնների դասախոսներ: Անհրաժեշտության դեպքում կարող է հրավիրվել փորձագետ, ում մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքներին ամրագրվում է հրամանով:
- 18. Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը, նիստ/եր/ի հրավիրումը և անմիջական ղեկավարությունը իրականացնում է Հանձնաժողովի նախագահը:
- 19. Հանձնաժողովի նիստն իրավագոր է հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում:
- 20. Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները հաստատվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:
- 21. Թեկնածուների գնահատումն իրականացվում է սույն կարգի *Հավելված 1-ով* սահմանված գնահատման համակարգով: Հաղթող են ճանաչվում առավելագույն միավորներ ունեցող հավակնորդները:
- 22. Հանձնաժողովի որոշումը կարող է լինել
 - 22.1. յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ.
 - ա) մրցանակակիր լինելու և մրցանակ շնորհելու մասին
 - բ) մրցանակակիր չճանաչելու մասին:
 - 22.2. մրցույթը չկայացած համարելու մասին:
- 23. Հանձնաժողովը արդյունքները հրապարակում է փաստաթղթերի փաթեթի ներկայացման վերջնաժամկետից հետո մեկամսյա ժամկետում:
- 24. Մրցույթի արդյունքները հանձնաժողովի նախագահը գրավոր ներկայացնում է ռեկտորին:



Վ.ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

25. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Համալսարանի Գիտխորհրդի կողմից հաստատվելուց հետո:
 26. Կանոնակարգով չնախատեսված դեպքերը կարգավորվում են Համալսարանի Կանոնադրությամբ և ՀՀ իրավական ակտերով սահմանված կարգով:

Հավելված 1

Թեևածուների գնահատման սանդղակ

Չափանիշ	Առավելագույն միավորը
1. Մեթոդ/ների նկարագրություն	4
2. Դասի ժամանակ ուսանողների ընդգրկվածություն, հետադարձ կապի գնահատում	4
3. Դասախոսի փորձառությունը, հմտությունը	4
4. Ընդհանուր դասի կազմակերպվածություն (ալգորիթմ, հերթականություն, ուսանողների ակտիվության կառավարում)	4
5. Տեսադասի տևողությունը.	4
<input type="checkbox"/> մինչև 10 րոպե <input type="checkbox"/> 11-15 րոպե <input type="checkbox"/> 16-20 րոպե <input type="checkbox"/> 21 րոպեից ավելի	1 2 3 4
Ընդհանուր առավելագույն միավորը	20



Տարածված է գիտական խորհրդի նախագահի կողմից 2021թ.

2021թ.